

I

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆԱՑՈՒՄԸ
ԱՆԳԼԻԱՅՈՒՄ. ԶԵՅԱԱ ԲՐԱՅՍ ԵՎ ԱՌԵՈԼԴ ԹՈՅՆԲԻ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Առաջին աշխարհամարտը սկսվելուն պես Հայ Հասարակական-քաղաքական մտքի ակնառու գործիչները լծվեցին ազգային ազատագրության հույսերը պատերազմում Անտանտի առաքելության վրա խարսխելուն: Եռույնիսկ Արշակ Չոպանյանի նման խոհեմ գործիչն ու գիտնականը կարծում էր, որ Հայերի կամավորագրումը Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի բանակներում ու արիաբար կռվելը ապահովելու էր «աշխարհիս վերե. ծագելիք արդարություն արևին տակ, ազատամարտիկ ազգերուն շարքին մեջ, ազատության արժանի քովը բարձրաճակատ» երևալուն¹: Հավատալով պատերազմում Անտանտի «ազատագրական» դերին՝ ազգի մտավորականները կամա թե ակամա դարձան այդ առաքելության, նաև ցեղասպանության ենթարկվող իրենց ժողովրդի վիշտը հրապարակայնացնելու Անտանտի տերությունների կողմից պատերազմի խրախուսման գործիք: Այդ պատերազմը, նրանց ըմբռնմամբ, մեծամասամբ, «ազատության և դեմոկրատիայի պատերազմն էր գերմանական միլիտարիզմի դեմ»²: Անգլիացի քաղաքական փորձառու գործիչներն ու դիվանագետները փայլուն Հասկացան այս գործոնը և որեէ ջանք ու եռանդ չխնայեցին բնաջնջվող Հայ ժողովրդի ճակատագիրը Համայն մարդկությանը ներկայացնելուն և այն իրենց իսկ սեփական շահերին ծառայեցնելուն:

1915 թ. Արևմտյան Եվրոպայում և մասնավորապես Անգլիայում Հայտնի դարձավ Օսմանյան կայսրությունում Հայ ժողովրդի դեմ իրականացվող ոճրագործության պատմությունն իր մանրամասներով³:

Անգլիայում Հայոց ցեղասպանության հրապարակայնացման գործը պետք է ստանձնեին Անգլիայի խորհրդարանի լորդերի սլալատի անդամ Ջեյմս Իրայսն ու երիտասարդ գիտնական, Անգլիայի արտաքին գործերի նախարարության աշխատակից Առնոլդ Թոյնրին:

1876 թ. այցելելով Արևելյան Հայաստան և բարձրանալով Արարատ լեռը՝ Կ. Իրայսը, կարծես, Հավետ կապվեց Հայ ժողովրդի Հետ՝ սլարբերաբար իր գործունեության ընթացքում հրապարակայնացնելով տառապանքների և Հայաձանքների ենթարկվող ժողովրդի պատմությունը⁴: Պատմաբանն ու քաղաքական գործիչը 1880-ական թվականներին հարելով և անդամակցե-

¹ «Մշակ», 17. X. 1914:

² Կ. Իրայսն. Արշակ Չոպանյան. Երևան, 1987, էջ 325:

³ Ա. Ն. Կոնստանտինով. Բրիտանիա և Հայկական Հարցը (1915-1923թթ.). Պէյրուսթ, 1994, էջ 76:

⁴ H. A. L. Fisher. James Bryce. Vol. I, New York, 1927, p. 157-170.

լով Ու. Գլադսթոնի գլխավորած լիբերալ կուսակցությանը, գառնում է 80–90-ական թվականներին բազմիցս Անգլիայի վարչապետ ընտրված Ու. Գլադսթոնի «Հայասիրական» կեղծ քարոզչության և Աբդուլ Համիդի Հայալինջ քաղաքականության հրապարակայնացման ու քննադատման գործընթացում թրծված հրապարակախոս: 1885 թ. Զ. Բրայսը 48 տարեկան հասակում Ու. Գլադսթոնի կողմից հրավիրվեց պառլամենտ ստանձնելու Համայնքների պալատի արտաքին դեպարտամենտի փոխքարտուղարի պաշտոնը: Բրայսի կողմից շուրջ երկու տասնամյակ հնչեցրած Հայկական հարցը և դրա շուրջ գրած տասնյակ հոդվածները, աշխատությունները՝ լայն հնարավորություններ էին ստեղծում նրա համար շփվել, համագործակցել անգլիահայ և աշխարհով մեկ սփռված հայ մտավորականների, հասարակական-քաղաքական գործիչների հետ՝ դառնալով Լոնդոնում Հայոց ցեղասպանության մանրամասների ամենաիրազեկված անձանցից մեկը: Այսպես, 1916 թ. մարտի 3-ին Լոնդոնից Զ. Բրայսը դրում էր Ա. Չոպանյանին. «Ճրանսիայում և Անգլիայում ձեր ընկերների համար օգտակար կլինի, եթե երկու երկրների հասարակական գիտակցության մեջ արթուն պահվի Հայաստանի վերաբերյալ պահանջը: Ձեզ կուղարկեմ այստեղ հրատարակված «Ազգի սպանությունը» գրքուկի ֆրանսերեն թարգմանությունը: Մենք պատրաստում ենք տեղահանությունների և կոտորածների ամբողջական պատկերը պարունակող մի գիրք՝ որքանով մենք տիրապետում ենք փաստերին: Եթե դուք վերջին մի քանի շաբաթում ստացել եք այս դեպքերի վերաբերյալ լրացուցիչ մանրամասներ, որոնք դուք վավերական եք համարում, ուղարկեք դրանք ինձ, որպեսզի կարողանանք օգտագործել այս պատմական արձանագրության մեջ»⁵: «Ազգի սպանությունը» գրքի հետ հիշատակվող այն գիրքը, որը Զ. Բրայսը նախատեսում էր հրատարակել, հետագայում մեծ ճանաչում ստացած, Հայոց ցեղասպանության պատմության նյութերի և փաստաթղթերի ժողովածուն էր՝ անգլիական «Կապուլտ գիրքը»: Հայոց եղեռնի վերաբերյալ ստացված վերջին տեղեկատվությունը հայցող այս նամակն ակնհայտորեն վկայում է, որ մինչ այդ Ա. Չոպանյանն արդեն հասցրել էր մի շարք վավերագրեր հանձնել Զ. Բրայսին: Հրատարակվելիք գիրքն առնչվում էր անգլիական պաշտոնական շրջաններում ծրագրված, Զ. Բրայսի և Անդրիայի արտաքին գործերի նախարարության աշխատակից, Երիտասարդ պատմաբան, հետադայում աշխարհահռչակ գիտնական Առնոլդ Թոյնբիի կողմից ցեղասպանությունը հրապարակայնացնելուն և դրա քարոզչությանը միտված փաստաթղթերի ժողովածուի՝ «Կապուլտ գրքի» հրատարակմանը: Այդ պատվերը Զ. Բրայսն ու Թոյնբին կառավարությունից ստացել էին 1916 թ. փետրվարին⁶: Հարկ է ասել, որ նույն թվականի սկզբին Փարիզում գտնվող Զ. Բրայսը, որը մասնակցում էր անգլո-ֆրանսիական միջպառլամենտական նիստին, հայ գաղթօջախի կողմից հրավիրվել էր մասնակցելու իր պատվին կազմակերպված ընդունելությանը: Ի պատասխան Պոդոս

⁵ Նույն տեղում, էջ 171–188:

⁶ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Ա. Չոպանյանի ֆ. ք. III, գ. 8, թ. 17, N 3916:

⁷ Foreign Office, (այսուհետև՝ FO) 96/205/26–29.

Նուրարի ողջունյի խոսքին, Բրայսն ասաց. «Արդեն մի քանի տարի է ես պաշտպանում եմ Հայկական հարցը: Ես սիրում եմ հայերին: ... Եթե այս անգամ էլ Անգլիան չնախաձեռնի որևէ բան Հայաստանի բարեկեցության համար, ապա ես առաջինը նրանից (Անգլիայից – Տ. Ս.) կհրաժարվեմ, իսկ իմ հետ նաև լիրերալները»⁸:

Տարբեր աղբյուրներից ստանալով Հայոց ցեղասպանության վերաբերյալ անհերքելի բաղձաթիվ վավերագրեր, 1916 թ. առաջին կեսին Թոյնրին ու Բրայսը ձեռնարկեցին «փաստերը հավաքելու և դրանք հրապարակայնացնելու» ծրագիրը⁹: Ստվարածավալ այդ աշխատանքը «Հայերի նկատմամբ վերարերմունքը Օսմանյան կայսրությունում, 1915-1916 թթ.» հրատարակվեց որպես Մեծ Բրիտանիայի պառլամենտական «Կապուլտ գրքի» հրատարակության շարքի բաղկացուցիչ մաս¹⁰: Շատ տարիներ անց, արդեն աշխարհահռչակ համբավ ունեցող Ա. Թոյնրին պետք է խոստովաներ, որ իրը ո՛չ ինքը և ո՛չ էլ լորդ Բրայսը տեղյակ չէին հայերի թշվառության հրապարակայնացման բրիտանական կառավարության դրդապատճառներին¹¹: Անգլիայի արտաքին գործերի նախարարությունը հայերի ցեղասպանության վերաբերյալ աշխարհում առաջինը փաստաթղթերի ժողովածուն որպես «Կապուլտ գիրք» տպագրելու համաձայնությունը տվեց 1916 թ. հունիսի 14-ին¹²: Հետագայում 684 էջ ծավալ ունեցող և 158 փաստաթղթերից բաղկացած¹³ երիտթուրքերի կողմից իրականացված Հայոց ցեղասպանությունը մերկացնող այս աշխատությունը՝ Օսմանյան կայսրության տարածքում գյուղ առ գյուղ, ժամ առ ժամ իրականացված ոճրի մանրամաս նկարագրման օրինակը պետք է համարվեր ամբողջ աշխարհում: Փաստաթղթերի ժողովածուի տեսքով այն, անշուշտ, ներկայացնում է Մեծ եղեռնի պատմությունը: Գրքի իրական արժեքը նրա աղբյուրագիտական նշանակությունն է: Բայց արև ու տես, որ գրքի հանձնակատարներն ու նրանց պատվիրատուներն առաջնորդվում էին այլ արժեքներով, արժեքներ, որոնք պետք է շահարկվեին թուրքական պատմագրության կողմից Հայոց ցեղասպանության հետագա ուրացումների և պատմության նենգափոխման գործընթացում: Գրքի իրական նպատակը բացահայտվում է Ջ. Բրայսի կողմից Անգլիայի արտաքին գործերի նախարարին հղած նամակի վերջին տողերում. «Սիրելի էգվարդ (էգվարդ Գրեյ – Տ. Ս.), ... Ակնհայտ է, որ ստացված իրադարձությունների արձանագրումը, քանի դեռ դրանց վերաբերյալ հիշողությունները թարմ են մեր սերնդի մոտ, կարևոր է ոչ միայն ապագա պատմաբանների համար, այլև հասարակական կարծիքի ծանուցման համար ինչպես պատերազմող պետությունների, այնպես էլ չեզոք ժողովուրդների համար այն դեպքերի մասին, որոնք տեղի են ունեցել Փ. Ասիայում և Հայաստանում: Եվրոպայի և Ամերիկայի հասարակա-

⁸ «Армянский вестник», 1916, №15, с. 15.

⁹ A. J. T o y n b e e. Acquaintances. Oxford, 1967, p. 149.

¹⁰ J. B r y c e and A. J. T o y n b e e. The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916: Documents Presented to Viscount Grey of Fallodon by Viscount Bryce. London, 1916.

¹¹ A. J. T o y n b e e. Acquaintances, p. 149-151.

¹² Bodleian Library (Oxford). Papers of James Bryce 202/153.

¹³ «Армянский вестник», 1917, №2, с. 18.

կան կարծիքը (ընդձեռնմը մերն է) պետք է ունենա իր պատկերացումը այն քաղաքականութեան վերաբերյալ, որին հետամուտ ենք լինելու այս պատերազմի ավարտին, երբ վրա կհասնի Մերձավոր Արևելքի քաղաքական կարգավիճակի վերանայման ժամը»¹⁴: Պատասխան նամակում էդ. Գրեյը հաստատում էր ոչ միայն աշխատութեան պատմագիտական արժեքը, այլև պատերազմում դրա խաղալիք առաքելութունը. «Այդ գիրքը արժեքավոր է ոչ միայն հասարակական կարծիքը անմիջականորեն ծանոթացնելու այն «կուրսին», որը որդեգրել է թուրքական կառավարութունը անօգնական ժողովրդի նկատմամբ, այլ որպես տեղեկութունների գանձարան, օգտակար հետազոտ պատմիչների և այլ նպատակների համար, որոնք դուք մատնանշում եք ձեր նամակում (ընդձեռնմը մերն է)»¹⁵: Այդ նպատակը Անտանտի երկրների պրոպագանդան էր, որն առաջին հերթին շրջապատույտի մեջ դրվեց չեզոք երկրներում: Դրա արդյունքում պետք է վարկաբեկվեր ոչ միայն թուրքիան, այլև նրա գլխավոր դաշնակից Գերմանիան՝ նպաստելով չեզոք պետութունների, առաջին հերթին ԱՄՆ-ի կողմից Եռյակ միութեան երկրներին պատերազմ հայտարարելուն: Հայոց վշտի քարոզչութունն ու ավետումը այս պարագայում հանդես էր գալիս որպես լավագույն միջոց: Այդ գաղափարն արտացոլվում է 1916 թ. դեկտեմբերի 20-ին Ջ. Բրայսի կողմից Ա. Չոպանյանին հղած նամակում. «Ես շատ քիչ հույս ունեմ, որ այնպիսի չեզոք պետութուն, ինչպիսին է Իսպանիան, կմիանա Հայաստանի վերաբերյալ որևէ բողոքի՝ հասցեագրված թուրքերին: ԱՄՆ-ն արդեն մեծ գործ է կատարել, չնայած, անշուշտ, մեղմորեն և հասցրել է ձեռք բերել և որոշ օգնություն ուղղարկել փախստականներին: Շնորհակալ եմ Հալիլի հարցազրույցի թարգմանութեան համար: Իհարկե, մենք թուրքերից կեղծիքից բացի ոչինչ չենք կարող սպասել»¹⁶: Կամա թե ակամա Ա. Չոպանյանը մասնակից էր դառնում անգլիացի «հայասերներին» խարդավանքներին, իր օժանդակութունը բերելով ոչ միայն տեղեկատվության ասպհոզմանը, այլև լինելով թուրքերենի հմուտ գիտակ՝ հանդես էր գալիս որպես թարգման: Թերևս, նրա ջանքերի և աջակցութեան շնորհիվ էր, որ անգլիական «Կապույտ գիրքը» նույն թվականին վերահրատարակվեց ֆրանսերեն լեզվով՝ ֆրանսախոս հանրութեանը ծանոթացնելով Հայոց եղեռնին¹⁷:

Անգլիայի պաշտոնական շրջաններում պատերազմի առաջին իսկ օրվանից հասկացան, որ դրա հաջող մղման համար պահանջվում էր գտնել և լայնորեն օգտագործել գաղափարական ու բարոյական այնպիսի ազդու միջոցներ, որոնք կնպաստեն հակամարտող դաշինքներին արդարանալ

¹⁴ «Армянский вестник», 1917, № 2, с. 18; նաև՝ J. Bryce and A. Toynbee. The Treatment of Armenians in the Ottoman Empire. 1915-1916. Uncensored Edition, Edited and with an introduction by Ara Sarafian, (այսուհետև՝ A. Sarafian...), New Jersey, 2000, p. 14-15.

¹⁵ «Армянский вестник», 1917, № 2, с. 18, նաև՝ Վ. Միլրապետյան. Լորա Պրայս, Հայկական ջարդերու փաստաթղթերը. մաս Ա, Կ. Պոլիս, 1920, էջ 2, նաև՝ A. Sarafian. Նշվ. աշխ., էջ 16:

¹⁶ ԳԱԹ, Ա. Չոպանյանի ֆ., ք. III, գ. 8, թ. 17, N 3922.

¹⁷ J. Bryce et A. Toynbee. Le traitement des Arméniens dans l'Empire Ottoman, 1915-1916. Documents présentés au vicomte Grey of Fallodon secrétaire d'Etat aux Affaires Etrangères par le vicomte Bryce. Paris, 1916.

Համաշխարհային Հանրային կարծիքի առջև՝ ապահովելով չեզոք երկրների Հանրային բարեհաճությունը, սեփական Հանրության միասնականությունը, ստեղծելով այն գաղափարաբարոյական հենքը, առանց որի անհնարին էր պատերազմում հաղթանակել¹⁸: Այդ գտածոն, ի թիվս այլոց, Հայոց ցեղասպանությունն էր և նրա Հրապարակայնացումը: «Մեծ Բրիտանիայի ժողովրդական վրդովմունքը թուրքական բռնությունների նկատմամբ ստիպեցին Դիդրայելի կաբինետին թողնելու անտարբերության քաղաքականությունը և 1876թ. մասնակցելու Կ.Պոլսի կոնֆերանսին. նույնը կատարվեց 90-ական թվականների Հայերի կոտորածների ժամանակ»¹⁹: Անդրիական Հասարակական ենթադրակցության մեջ դեռ վառ էին և՛ Դյադսթոնի, և՛ Սուլթանի վարիսեցիությունը, իսկ Առաջին աշխարհամարտում Ասքուիթի կառավարությունը չէր կարող անտարբեր անցնել և չօգտագործել Հայերի նկատմամբ կարեկցանքի զգացում առաջացնող նախկինում ստեղծված պարարտ հողը իր այդժամյա ծրագրերի իրականացման համար²⁰: Այս առումով, Մեծ Բրիտանիան Համադործակցում և օժանդակում էր Ֆրանսիային: Սրանով էր բացատրվում այն, որ 1916 թ. նոյեմբերի 30-ին և դեկտեմբերի 1-ին անդլիացիները Լոնդոնում Ֆրանսիական ռազմական կցորդ Լափանուզին Հանձնեցին Սիրիայի Արևմտյան կառավարի երկու արաբ սպանների վկայությունները Հայոց կոտորածների, Միջագետքի անապատներում գտնվող մահվան ճամբարների մասին՝ այն Ֆրանսիայում Հրապարակելու մտադրությամբ²¹:

Այն, որ Հայերի նկատմամբ Հանցանքն օգտագործվելու էր Գերմանիայի դեմ, ահադանդում էր նույնիսկ Յոհաննես Լեփսիուսը 1915 թ. հունիսի 22-ին Գերմանիայի արտաքին գործերի նախարարությունը ներկայացրած գրություն մեջ. «Հենց որ եվրոպայում և Ամերիկայում Հայտնի դառնան Հանրաձանոթ փաստերը, ինչպես դա ենթադրում է իր հունիսի 4-ի Հեռագրի մեջ դեսպանը, «դրանք նորից ամբողջությամբ թշնամի Հանդիսացող աշխարհում կդառնան վրդովմունքի պատճառ և կօգտագործվեն մեր դեմ»²²: Նույն դադափարն էր շեշտում Բեռլինում միսիոներական միությունների անօրեն Կառլ Աքսենֆելդը իր 1916 թ. նոյեմբերի 16-ին կառավարությունը հղած նամակում: Համաձայն Կ. Աքսենֆելդի, Հայոց ցեղասպանությունը «Անտանտի երկրներին տալիս է, ինչպես կրկին վկայում է վարչապետ Ասքուիթի ճառը, ցանկալի և բացառիկ առիթ, որպեսզի չեզոք երկրներում բորբոքվի տրամադրությունը ընդդեմ Կենտրոնական տերություններին, մասնավորապես ընդդեմ Գերմանիայի»²³:

¹⁸ Ե. Գ ա ս պ ա ռ յ ա ն. Ֆրանսիան և մեծ եղբունը. Երևան, 2000, էջ 17:

¹⁹ B e r n a d o l t t e E. S c h m i t t. The Relations of Public Opinion and Foreign Affairs before and during First World War. – “Studies in Diplomatic History and Historiography in Honour G. P. Gooch”. Planned and Edited by A. O. Sarkissian, New York, 1961, p. 325.

²⁰ Նույն տեղում:

²¹ A. B e i l e r i a n. Les Grandes Puissances, l' Empire Ottoman et les Arméniens dans les archives françaises (1914-1918). Paris, 1983, p. 298.

²² В. М и к а е л я н. Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919). – «Материалы политического архива министерства иностранных дел кайзеровской Германии». Ереван, 1995, с. 188.

²³ Նույն տեղում, էջ 411–412:

Այսպիսով, Ջ. Բրայսն ու Ա. Թոյնբին չզլացան կյանքի կոչել կառավարողական կողմից իրենց տրված հանձնարարականները: ԱՄՆ-ում նախկինում դեսպան Ջ. Բրայսը այն հարմար մարզն էր, որի հրապարակային խոսքը ամերիկյան մամուլում կարող էր հակազդել հասարակության շրջանում թուրք-գերմանական հայերին «հեղափոխական» և «ապստամբ» ներկայացնող կեղծ քարոզչությանը: 1915թ. սեպտեմբերի 20-ին «Associated Press»-ի միջոցով ամերիկյան ժողովրդին հղած լորդ Բրայսի կոչը հաջորդ օրն իսկ դարձավ հրապարակային: Դրանում մասնավորապես ասվում էր. «Քաղաքակիրթ աշխարհը, հատկապես Ամերիկան, պարտավոր են իմանալ, թե ինչպիսի սարսափներ են տեղի ունեցել Ասիական թուրքիայում վերջին ամիսների ընթացքում: Թուրքական կառավարողական բնաջնջող ձեռքը միակ կանգնեցնողը կարող է լինել չեզոք երկրների կարծիքի արտահայտումը՝ դիտավորապես մարդասեր Ամերիկայի արդարադատության դրսևորումը»: Լորդ Բրայսը հիշեցնում էր, որ Դաշնակից տերությունները ոչնչով չէին կարող օգնել հայերին. միայն Գերմանիան էր, որ ամերիկյան հասարակական կարծիքի ճնշման տակ կարող էր դադարեցնել կոտորածը²⁴:

Գերմանա-թուրքական հակաքարոզչությունը չհապազեց հայերի սպանդն արդարացնող ապատեղեկատվությունը հասցնել ԱՄՆ և չեզոք այլ երկրներ: Այսպես, ի պատասխան ամերիկյան միջամտությունն աղերսող Բրայսի կոչին՝ ԱՄՆ-ում Գերմանիայի դեսպան կոմս Ռեվենթլոուն «խստորեն քննադատեց ցանկացած ամերիկյան դործողություն», ամերիկյան մամուլում բացատրելով, որ «Անգլիան և Ռուսաստանը Հայկական հարցը օգտագործել են իրենց սեփական նպատակների համար»²⁵: Որոշ ժամանակ անց արդեն նույն Բրայսը Գերմանիային մեղադրում էր որպես Հայոց ողբերգության ամենագլխավոր մեղսակից²⁶: Հայաջնջման մեջ Գերմանիայի մեղսակցությունը և մասնակցությունը ընդգծող այս միտումը դարձավ Անգլիայի արտաքին դործերի նախարարության նպատակներից մեկը: Այսպես, 1915 թ. հոկտեմբերին Բոստոնում Անգլիայի Հյուսիսատլանտիկ աշխատակից Լիեյը արտաքին դործերի փոխնախարար Գ. Լոկուկին դրում էր, որ ոմն «Ասիմերու բեյ հստակ տեղեկություն է տրամադրել Հայկական կոտորածներում գերմանական կառավարության ունեցած սազրանքի և դրանում նրա մեղսակցության վերաբերյալ»²⁷:

Գերմանա-թուրքական հակաքարոզչության դեմ մղված և դրա կեղծիքը դատապարտող անգլիական առաջին հաղթանակը ԱՄՆ-ում արձանագրվեց 1915 թ. հոկտեմբերի սկզբներին, երբ Վաշինգտոնում Անգլիայի դեսպան Սպրինգ-Ռայսը Լոնդոն հղած հեռագրում նշում էր, որ անկախ ԱՄՆ-ում Գերմանիայի դեսպանի հայերին ապստամբ և հեղափոխական ներկայացվող միտումին, ԱՄՆ կառավարությունն արդեն դատապարտել է հայերի կոտորածները և դրանում մեղսակից գերմանացիների դերը²⁸:

²⁴ "The New York Times", 21. IX. 1915.

²⁵ Նույն տեղում, 8. X. 1915.

²⁶ Նույն տեղում, 16. X. 1915.

²⁷ FO 371/2488/148432.

²⁸ FO 371/2488/145049.

1915 թ. օգոստոսի 6-ին «The Manchester Guardian» պարբերականն արդեն գրում էր, որ Զեյթունի և Մարաշի շրջանների հայ բնակչությունը, մոտավորապես 28000 հոգի, տեղահան է արվել թուրքական կառավարության հրահանգով: Թերթը գրում էր. «Հազարավոր մարդկանց արդեն ուղարկել են դեպի Հյուսիս-արևմուտք՝ դեպի Կոնիայի, Կեսարիայի, Կաստամունյուի և այլ նահանգներ. մյուսներին ուղարկել են հարավ-արևելյան ուղղությամբ, այնքան հեռու, որքան Դեր-էլ-Ջորն է և, անգամ, հաղորդագրություններն ասում են, դեպի Բաղդադի շրջակայքը: ... Հիվանդները լքվում են ճանապարհին, հղի կանայք ծննդաբերում և որոշ մայրեր, համաձայն հաղորդագրությունների, իրենց երեխաներին խեղդամահ կամ ջրախեղդ են անում, որովհետև նրանց նկատմամբ հոգ տանելու առարկաների պակաս ունեն: Հայրերն արտաքսվում են այս ուղղությամբ, մայրերը մեկ ուրիշ, երիտասարդ աղջնակները, փոքր երեխաները՝ ... այլ: Վստահելի աղքատների վրա հիմնված հաղորդագրությունների համաձայն, ուղեկցող ժանդարմներին ասվել է, որ նրանք կանանց և աղջիկների նկատմամբ կարող են անել այն, ինչ կամենան»²⁹:

1915 թ. սեպտեմբերի 22-ի համարում անգլիական «Daily News and Leader» պարբերականը լորդ Բրայսի ստորագրությամբ հոդվածում նկարագրում էր, թե ինչպես են Տրապիզոնի 10 000 հայ բնակչությանը «նստեցրել նավակները, տարել ծովը և տախտակամածից ծովը նետելով՝ խեղդել թուրքի տղամարդկանց, կանանց, երեխաներին: Դա տեսել ու նկարագրել է Իտալիայի Հյուսպատոսը»: Ապա հոդվածի հեղինակը շարունակում է. «Ինչը՝ կարող է դադարեցնել կոտորածները: Ո՛չ Թուրքիայի հետ պատերազմում գտնվող Դաշնակից տերությունները: Այդ նպատակով միայն մեկ պետություն կարող է քայլ ձեռնարկել: Դա Գերմանիան է: Կարող է չեղոք երկրների խիղճը բարձրացնող ամերիկյան հասարակական կարծիքի արտահայտությունն ուղեկցի Գերմանիային գործադրելու իր ազդեցությունը թուրքական կառավարության վրա՝ հրաժարվելու դրանից, նախքան զարհուրելի աշխատանքը կավարտվի»³⁰: Հայոց ցեղասպանության մեջ Գերմանիայի մեղսակցությունն արտահայտող առաջին հաղորդագրությունն անգլիական պաշտոնական մամուլում հայտնվեց արդեն 1915 թ. հոկտեմբերի 6-ին. ոճիրը երկար նկարագրելուց հետո «The Times» թերթը եզրակացնում է, որ Գերմանիան չբարձրացրեց իր ձեռքը ոճիրը կանխելու համար. «Կոմս Ռեյվենթրոուն հաստատում է այդ անտարբերությունը: Գերմանիան որդեգրել է անտարբերություն Փ. Ասիայում իրականացվող կոտորածների նկատմամբ, քանի որ նա իրականացրեց կոտորածներ Իելգիայում և Ֆրանսիայում՝ ելնելով «պետության շահերից»³¹: Այս պահից ի վեր է, որ անգլիական պաշտոնական քարոզչության խոստովողը հանդիսացող մամուլը շրջանառության մեջ է դնում Գերմանիայի՝ Թուրքիայի հետ հավասարապես հայոց ցեղասպանության մեջ մեղսակցության կարգախոսը, որը գնալով ավելի էր հիմնավորվում, վերածվում կարծր տե-

²⁹ «The Manchester Guardian», 6. VIII. 1915.

³⁰ «The Daily News and Leader», London, 22. IX. 1915, նաև՝ «Ararat: A Searchlight on Armenia» (այսուհետև՝ Ararat). London, vol. III, № 27, 1915, p. 120.

³¹ «The Times», London, 8. X. 1915.

սուլթան: Բայց այդ տեսուլթյան կյանքը շատ քիչ տևեց, մինչև պատերազմի ավարտը. այդ պահից սկսած այն աստիճանաբար մոռացուլթյան տրվեց³²:

1915 թ. հոկտեմբերի 11-ին Պետերբուրգում Անգլիայի դեսպան Ջ. Բյուքանանին արտաքին գործերի նախարարուլթյունը պատվիրել էր ձեռք բերել Հայերի բնաջնջումը ներկայացնող լուսանկարներ և նյութական ապացույցներ, որովհետև դրանք «լավագույն կերպով կարող են օգտագործվել Ամերիկայում»³³: Վատիկանում Անգլիայի ներկայացուցիչ Գրեգորիին հանձնարարվել էր հավաստիացնել Հռոմի պապին, որ թուրքական կառավարուլթյան այն պնդումները, թե «Նորին զերազանցուլթյան կառավարուլթյունը հրահրել կամ խրախուսել է որևէ ապստամբուլթյուն թուրքերի դեմ» կեղծ են և ուղղված են Անգլիայի հեղինակուլթյան վարկաբեկմանը³⁴:

Նորահայտ մեկ այլ փաստաթուղթ հերքում է Ա. Թոյնբիի վերը նշված այն խոստովանուլթյունը, ըստ որի ո՛չ ինքը և ո՛չ էլ լորդ Բրայսը տեղյակ էին հայոց ցեղասպանուլթյան հրուպարակայնացման անգլիական պաշտոնական շահախնդրուլթյանը. «Լորդ Բրայսը դրել է մեզ տեղեկացնելու, որ ի պատասխան «Bibliothèque Universelle et Revue Suisse»-ի խմբագրի և Բրիտանական պրոպագանդայի կոմիտեի (ընդգծումը մերն է) խնդրանքին այս ամսագրի համար դրել է պատերազմում Բրիտանիայի նպատակների և վերաբերմունքի մասին»³⁵: Թոյնբին և Բրայսը տեղյակ էին, որ ծառայում էին պրոպագանդային. դա հաստատուլթում է ստորև, մեկ այլ հիմնավոր արևելվային փաստաթղթով:

Հայոց եղեռնի վերաբերյալ տեղեկատվուլթյուն հայթայթելու լավագույն հնարավորուլթյունն ունեն Բաթումում Անգլիայի հյուպատոս Պատրիկ Սթիվենսը: Թուրքական յաթաղանից մազապուրծ հարյուր հազարավոր զաղթականներ ապաստանել էին Արևելյան Հայաստանում և Կովկասում, այս տարածքում առկա հայ մամուլը լավագույն միջոցն ու աղբյուրն էր, տարագիրների վկայուլթյուններից ծաղկաքաղ անելու և այն Լոնդոն արտաքին գործերի նախարարուլթյանն ուղարկելու համար: Իր հաղորդագրուլթյան մեջ հյուպատոս Պ. Սթիվենսը թարգմանաբար կցել էր 1915 թ. եղեռնի սարսափները ներկայացնող այն հաղորդագրուլթյունը, որը տպագրվել էր «Кавказское слово»-ում³⁶:

Պատերազմի ողջ ընթացքում Պ. Սթիվենսը շարունակաբար Լոնդոն էր ուղարկում Հայոց եղեռնը մանրամասնող հաղորդագրուլթյուններ և ոճրագործուլթյան ականատեսների հուշերը:

Քարոզչուլթյունը կատարվում էր ոչ միայն Ամերիկայում, այլև Դանիայում, Շվեյցարիայում, Իտալիայում, Բուլղարիայում, այն բոլոր երկրներում, որոնք էական դեր էին խաղում և խաղալու էին պատերազմում Անգլիային «ազատարար» ներկայացնող, իսկ թշնամիներին «բարբարոս» որակող մեղադրանքներում: Կոպենհագենում Անգլիայի դեսպան Հ. Լոու-

³² "Ararat", vol. III, № 35, 1916, p. 505-506.

³³ FO 371/2488/148680.

³⁴ FO 371/2488/152040.

³⁵ FO 371/2488/153610.

³⁶ FO 371/2488/192672/51009, նաև՝ "Кавказское слово", 27. XI. 1915.

թերը 1915 թ. հոկտեմբերի 13-ին հաղորդում էր Լոնդոն. «Այսօր ի պատասխան հայկական կոտորածների մասին բրիտանական հաղորդագրութ-յունների, դանիական մամուլում հայտարարություն է տպագրվել «La Patrie Egyptienne»-ի խմբագիր գլ. Մ. Մ. Ռիֆաթի կողմից:

Դրանում ասվում է, որ Անգլիան պատասխանատու է ապստամբ հայերի ճնշման համար: Հայերի միջոցով նա դավադրություններ է կազմակերպել. ապստամբություն պետք է բռնկվեր Կ. Պոլսում և Թուրքիայի ողջ տարածքում, այն ժամանակ, երբ Դաշնակիցներն անցնեին Դարգանելով: Բրիտանական կառավարությունը տրամադրել է զենք ու զինամթերք»: Թուրք լրագրողը Կոպենհագենում կեղծ լուրեր էր տարածում հայերի կողմից Թուրքական քաղաքների վրա հարձակման և Թուրքերին կոտորելու մասին: Դեսսպան Հ. Լոութերը հեռագրի վերջում իր վերադասին ինդերում էր, որպեսզի հերքման հաղորդագրությունները ծանուցվեն ոչ միայն բրիտանական մամուլում, այլև «Keller»-ի միջոցով փոխանցվեն արտասահման³⁷: Նման հաղորդագրություններն ու հակաքարոզչությունը կամ հերքվում, կամ շահավետ լինելու դեպքում տպագրվում և հասարակութ-յան դատին էր հանձնվում մամուլի միջոցով: Դա է վկայում այն, որ Պ. Սթիվենսի ուղարկած փաստերը արտաքին գործերի փոխնախարար Գ. Լոկոկի կողմից հանձնվեցին Բրիտանա-հայկական կոմիտեի նախագահ Ա. Վիլլիամսին, նշումով, որ «որևէ առարկություն չկա, եթե դուք ցանկա-նում եք այս փաստերը դարձնել հրապարակային»³⁸:

Շվեյցարիայում հայոց ցեղասպանության հրապարակայնացման շուրջ պայքարը ձեռք էր բերել այնպիսի կարևորություն, որ Թուրք-գերմանա-կան կողմը փորձեց կաշառել շվեյցարական ամենահեղինակավոր թերթե-րին: 1916 թ. սեպտեմբերի 24-ին Բեռնից Անգլիայի ներկայացուցիչ Հ. Ռոմբոլդտը հայտնում էր, որ մի քանի օր առաջ հանդիպելով Պոդոս Նուբարին տեղեկացել է, որ Թուրքական գործակալ հանդիսացող հայազգի Նիֆիլյանը, որը գտնվում էր Թուրքիայի արտաքին գործերի նախարարի հետ անմիջական կապի մեջ, Լոզանում հրապարակվող «Tribune» և «Gazette de Lausanne» թերթերին առաջարկել է 10 000 ֆունտ և հաստա-տել, որ նախարարը դեմ չէ վճարելու նույնիսկ 20 000: Գումարի դիմաց թերթերը պետք է տեղեկատվություն հրապարակեին, որ իբր Թուրքիան գաղտնի բանակցություններ է վարում Անտանտի հետ սեպարատ հաշ-տություն կնքելու համար: Դա պետք է հոգեպես և գաղափարապես աղ-դեր դաշնակից Գերմանիայի վրա՝ ավելի օթանդակելու և իր ողջ հակաքա-րոզչությունը տրամադրելու Թուրքիային՝ հերքելու և կեղծելու հայերի կոտորածների փաստը³⁹:

Գերմանա-թուրքական քարոզչության ապատեղեկատվությունը հաս-տատող լավագույն զեկուցագրերից մեկը ստացվեց Վաշինգտոնում անգլիական դեսպան Սեսիլ Սպրինգ-Ռայսի կողմից 1915 թ. հոկտեմբերի 8-ին: Հայոց ցեղասպանության մեջ գերմանական մեղսակցությունը ապացու-ցող, փոքր ազգերի, այդ թվում հայերի ազատագրության համար Անգլիա-

³⁷ FO 371/2488/149875.

³⁸ FO 371/2768/1455.

³⁹ FO 371/2777/190775/86-87.

յի մղած պատերազմն արդարացնող, Լոնդոն Հղված տեքստում մասնավորապես ասվում է. «Ձեկուցագրերը լրացվում են Վանից ժամանած ականատես միսիոներների վկայություններով, որոնք նկարագրում են, որ Հայերի վրա Հարձակումները տեղի են ունեցել գերմանացի սպայի ... հրամանատարությունում: Վերջին մի քանի շաբաթների ընթացքում պետքարտուղարությունը ստացել է անհամար թվով ղեկուցագրեր Փ. Ասիայում համատարած կոտորածների և վայրագությունների մասին: Գերմանիայի դեսպանը անմիջապես հայտարարեց, որ Թուրքիայում տեղի ունեցող վայրագությունները «աղքատիկ դյուտարարություն են»: Նա ասաց, որ իր հերքումը հիմնված է գերմանական կառավարությունից ստացված պաշտոնական և վավերական վերջին ղեկուցագրերի վրա: Մամուլի հազորագրություններից պարզ է դառնում, որ պետքարտուղարությունը գերմանական դեսպանատանն է ուղղել որոշ հարցադրումներ: Թուրքիայում Հայերի կոտորածների վերաբերյալ կատարված հայտարարությունների առնչությամբ Գերմանիայի դեսպանը պատասխանել է, թե «վայրագությունների վերաբերյալ այդ հաղորդագրությունները մեծապես չավագանցված են»: Գերմանիայի դեսպանը հայերի կոտորածները սրակում էր որպես նրանց բարձրագրած ապստամբությունների ճնշման հետևանք և «բնութագրում Հայերի նկատմամբ Թուրքական քաղաքականությունը որպես պատերազմական անհրաժեշտ միջոցառում»⁴⁰:

Արդեն 1916 թ. փետրվարին Ս. Ապրինգ-Ռայսը տեղեկացնում էր Էդ. Գրեյին, որ ի վերջո, ԱՄՆ կառավարությունը, հայերին ապստամբ և խռովարար ներկայացնող Գերմանիայի դեսպան Բերնսդորֆի հավաստիացումների դեմ, հանդես է եկել պաշտոնական բողոքով, մատնանշելով, որ ԱՄՆ-ն այլևս չի տարակուսում, որ «Թուրքական իշխանությունները պատասխանատու են մինչ այդ նմանը չունեցող» վայրագությունների համար⁴¹: Նպատակը և արդյունքը կարծես ակնհայտ էին: Պատահական չէ, որ անդլիական քարոզչության հաղթանակի արձանագրությամբ հիացավ նաև Անգլիայի ռազմական նախարարությունը, որի ծառայողներից Լորենս Գոլլենը արտաքին գործերի նախարարությանը հղած նամակում մատնանշում էր. «Մենք արդեն օգտագործում ենք Հայկական հարցը ԱՄՆ-ում մեր քարոզչության համար»⁴²:

Թվում էր, թե հայոց ցեղասպանության հրապարակայնացման անգլիական կառավարության գլխավոր շահագրգռությունը Թուրքիայի դեմ չեզոք պետություններին և ԱՄՆ-ին պատերազմի մեջ ներքաշելն էր: Բայց իրականում արձանագրված արդյունքն այլ էր: ԱՄՆ-ի միջոցով անգլիական դիվանագիտությունը ցանկանում էր ջախջախել առաջին հերթին իր ոխերիմ թշնամի Գերմանիային: Այդ էր պատճառը, որ հայոց ցեղասպանության իրականացման գործում Թուրքիայի պատասխանատվության հետ սկսեց աստիճանարար շրջանառության մեջ դրվել Գերմանիայի մեղսակցության գաղափարը: Անգլիական քարոզչությունն ավետում էր. «Դավաճանական լուռություն չպահպանել դարերի մարտիրոսի՝ Հայաստա-

⁴⁰ FO 371/2488/153862.

⁴¹ FO 371/2768/1455/45923.

⁴² Նույն տեղում:

նի (որին նաև «Ասիայի Բելգիա» են անվանում) դժբախտություն, նրա հե-
րոսական դիմադրություն և ազատության սրբազան դատի նկատմամբ»⁴³։
Բելգիայում գերմանացիների իրականացրած վայրագությունները Հա-
մադրվեցին Թուրքիայում Հայ ժողովրդի համընդհանուր ոչնչացման հետ։
Դա է կարծես վկայում նաև, մինչ այդ, Հայկական Հարցի հետ որևէ առն-
չույթուն չունեցող Շվեդիայի մայրաքաղաքում կազմակերպված Հայան-
պաստ ժողովը։ 1917 թ. մարտի 29-ին Ստոկհոլմում անգլիական Հավա-
տարմատարը հաղորդում էր Լոնդոն, որ երկու օր առաջ Ստոկհոլմի քաղա-
քապետի դիմավորությունը ցույց է կազմակերպվել Հայերի բռնագաղթի և
կոտորածի դեմ։ Քաղաքապետ Լինդհագենի ելույթին հաջորդել է ոմն
Բրանթինգի խոսքը։ Վերջինս դատասարտելով Բելգիայում իրականաց-
ված բռնությունները, Սերբիայի շրջափակումը, «Լուզիտանիա» նավի և
մարդատար այլ նավերի խորտակումը գերմանացիների կողմից, Բելգիա-
յում և Ֆրանսիայում իրականացված բռնագաղթը և վերջապես Հայերի
կոտորածները, որը համարում է մի ողջ ժողովրդի ընաճնջելու փորձ, Հա-
մայն մարդկության ուշադրություն էր հրավիրում Ջ. Բրայսի կազմած և
էր. Գրեյին ներկայացրած անհերքելի ապացույցները։ Արգարացնելով
գաղնակիցների «ազատարար» և «ճշված ժողովուրդների ազատության»
համար մղվող պատերազմը՝ Բրանթինգը մեջ էր բերում Լլոյդ Ջորջի խոս-
տումները, անարգանքի սյունին գամելով գերմանամետ «պահպանողա-
կան մամուլի» ոճիրներն արգարացնող ապատեղեկատվությունը⁴⁴։ Հաղոր-
դագրությունը ստանալուն պես արտաքին դործերի նախարարությունն
այն ուղարկեց Լոնդոնում հրատարակվող «Մերձավոր Արևելք Հանդեսի»
խմբագրությունը, պատվիրելով դատապարտել Հայ ժողովրդի ոչնչացման
մեջ գերմանացիների ունեցած մասնակցությունը, հիշատակել «Կապուլտ
գիրքը», գովաբանել պատերազմը հաղթական ավարտին հասցնելու վերա-
բերյալ երդումներ շոալոյ Լլոյդ Ջորջին⁴⁵։

Հանդեսն առանց որևէ փոփոխություն տեղեկատվություն հրատարա-
կեց գարնանային համարում⁴⁶։ Հարկ է նշել, որ քիչ վերը հիշատակված
«Լուզիտանիա» անգլիական շոգենավը գերմանացիները խորտակել էին
1915 թ. մայիսի 7-ին, ընդ որում 198 զոհերից 128-ը ամերիկյան քաղաքա-
ցիներ էին։ Այս գործոնը որոշակի դեր խաղաց ԱՄՆ-ի կողմից Գերմանիա-
յին պատերազմ հայտարարելու հարցում⁴⁷։ Այս փաստը չեն ժխտում ան-
գամ Անգլիայի քաղաքական գործիչները։ Այսպես, 1924 թ. Ս. Բոլդուինը և
Հ. Ասքուիթը վարչապետ Բ. Մակդոնալդին ներկայացրած միացյալ հու-
շագրի մեջ մատնանշում էին, որ Ջ. Բրայսի «Կապուլտ գիրքը» «լայնորեն
գործածվեց 1916–1917-ին դաշնակիցների քարոզչության համար և
կարևոր ազդեցություն գործեց ամերիկյան հանրային կարծիքի և նախա-
գահ Վ. Վիլսոնի պատերազմի մեջ մտնելու վերջնական որոշման վրա»։

⁴³ "The Asiatic Review", London, 10. VI. 1915.

⁴⁴ FO 371/3052/74082.

⁴⁵ Նույն տեղում։

⁴⁶ "The Near East", London, May 1917, p. 561.

⁴⁷ H. S. K a r a g u e u z i a n. Unclaimed Life Insurance Policies in the Aftermath of the Armenian Genocide.— "Armenian Forum", 2000, №2, p. 33.

Այս փաստը հաստատում է նաև Վ. Վիլսոնի արտաքին գործերի գծով խորհրդական գնդապետ է. Մ. Հաուսը⁴⁸:

Անգլիան հասավ իր նպատակին. 1917 թ. ապրիլին ԱՄՆ-ն պատերազմ հայտարարեց Գերմանիային: Թուրքական կառավարությունը խզեց դիվանագիտական հարաբերությունները ԱՄՆ-ի հետ, բայց ամերիկյան շատ միսիոներներ, վտանգելով իրենց կյանքը մնում էին Թուրքիայում և շարունակում իրենց հայափրկիչ առաքելությունը: Չնայած հայոց ցեղասպանության անգլո-ֆրանսիական քարոզչությունը, ԱՄՆ-ն այդպես էլ պատերազմ չհայտարարեց Թուրքիային և իր ավանդը բերեց միայն Անգլիայի կողմից Գերմանիայի ջախջախմանը⁴⁹: Հետևապես, Անգլիային հաջողվեց կրակի միջից ուրիշի ձեռքերով հանել իրեն հասանելիք տաք շագանակները:

ԱՄՆ պատերազմի մեջ մտնելը մեծապես նպաստեց Անտանտի հաղթանակին, քանզի Իտալիան և Ֆրանսիան լիովին հյուսիս էին, բրիտանական հասարակության լայն շրջաններում աճում էին հակապատերազմական տրամադրություններն ու կարգախոսները⁵⁰, իսկ ռուսական հեղափոխությունը կասկածի տակ էր գրել հաղթանակի հեռանկարը:

Կարծում ենք, որ խոր լուսաբանման և պարզաբանման կարիք ունեն Ա. Թոյնբիի և Զ. Իրայսի հայոց ցեղասպանության և Հայկական հարցում գրսևորած, մեղմ ասած, հետաքրքրության հիմքերը, պատճառները և, ի վերջո, դրա հետևանքները: Առավել ևս, որ այս երկու հակասական կերպարների գործունեությունը մեծապես օգտագործվել և օգտագործվում է հայոց ցեղասպանության ուրացման, ժխտման և նենգափոխման թուրքական և թուրքամետ պատմադրությունների գրվածքներում:

1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, երբ Կովկասյան ողջ ճակատն արդեն գտնվում էր կազմալուծման մեջ, դեկտեմբերի 29-ին ռուսական իշխանությունները հրապարակեցին «Թուրքահայաստանի մասին դեկրետը»: Այս փաստաթղթի համաձայն ռուսական զորքերը դուրս էին բերվելու Թուրքահայաստանից, պետք է կազմվեր Տաճկահայաստանի ժամանակավոր ժողովրդական կառավարություն և այդ տարածքների բնակիչների անձնական ու գույքային անվտանգությունն ապահովելու նպատակով պետք է ստեղծվեր հայկական ժողովրդական ոստիկանություն⁵¹: Չանդրադառնալով Անդրկովկասում տիրող քաղաքական իրավիճակին, նշենք, որ թուրքերը, փայլուն հասկանալով, որ իրենց դեմ արդեն կանգնած է Արևելյան Հայաստանի անպաշտպան բնակչությունը, 1918 թ. հունվարի 30-ին, խախտելով մինչ այդ կնքված Երզնկայի զինադադարը, գրավեցին Երզնկան, փետրվարի 4-ին՝ Բաբերդը, իսկ 8-ին՝ Մամախաթունը⁵²: Դաժանակամ գործողություններն, անշուշտ, ուղեկցվում էին հայ ժողովրդի մազապուրծ հատվածի նոր բնաջնջմամբ: Այս պայմաններում, երբ արդեն

⁴⁸ Bodleian Library, Toynbee Papers, Box on Armenia, "Memorial", 26 September, 1924: նաև՝ M. A n d e r s o n. Noel Buxton: A Life. London, 1952, p. 81, 110.

⁴⁹ Հայկական հարց. — Հայկական սովետական հանրագիտարան. Երևան, 1996, էջ 31:

⁵⁰ V. H. R o t h w e l l. British War Aims and Peace Diplomacy 1914-1918. Oxford, 1971, p. 96.

⁵¹ Հ. Ա վ ե տ ի ս յ ա ն. Հայկական հարցը 1918 թվականին. Երևան, 1997, էջ 72-73:

⁵² Նույն տեղում:

գոյատևման սպառնալիքը կախված էր Ռուսահայաստանի հայ ազգաբնակչության վրա, իր առաքելությանը վերագարձավ մի կողմից թուրք-գերմանական, մյուս կողմից Անտանտի, մասնավորապես Անգլիայի քարոզչությունը: Անդրկովկաս արշավող թուրքական բանակի հրամանատար Վեհիբ փաշան հայերի կատարած մտացածին «վայրագությունների» պատմություններով սկսեց «ռմբակոծել» Կովկասի ռուսական հրամանատարությունն ու իշխանություններին: 1918 թ. հունվարի 18-ին (31-ին) Վեհիբը Կովկասյան բանակի հրամանատար գեներալ Օդիշելիձեին գրում էր. «Հայերի դաժանությունը և բռնությունը մոսուլմանական ազգաբնակչության նկատմամբ ռուսական զորքերի կողմից գրավված թուրքական գավառներում, որ նկատվում էր այդ տարածքների գրավման առաջին իսկ օրից, երզնկայում և շրջակա գյուղերում ավելի լայն չափեր է ստացել»: Փաշան խնդրում էր միջոցներ ձեռք առնել «Օսմանյան մոսուլմանական բնակչության պատվի, կյանքի և գույքի ապահովման համար, հանուն մարդասիրության և քաղաքակրթության»⁵³: Այս տեղեկատվությունն անմիջապես թափանցեց համաշխարհային մամուլ: Այդ պահին էր, որ հայ ժողովրդին հերթական անգամ «արջի ծառայությունը» մատուցեց Ա. Թոյնբին: Անգլիական արխիվներից հայտնաբերված փաստաթղթերը միանշանակ վկայում են, որ ապագա նշանավոր գիտնականը պատերազմի տարիներին ծառայել է ոչ միայն արտաքին գործերի նախարարությունում, այլև հետախուզական բյուրոյի տեղեկատվության բաժանմունքում: 1918 թ. փետրվարի 19-ին Ա. Թոյնբին այս ծառայությունը գրում է, որ Շվեյցարիայում անգլիական հետախուզության հետ բանակցություններ վարող Քեմալ Միդհատ փաշան համաձայն չէր անգամ «Հայաստանին սահմանափակ ավտոնոմիա» տրամադրելուն: Ա. Թոյնբին գրում է. «Դա այժմ հաստատվում է «Agence Milli» 1918 թ. հեռագրով, որը հրատարակվեց գերմանական և ավստրիական մամուլում: Այս կիսապաշտոնական հայտարարության համաձայն, ռուսական զորքերը զինադադարի կնքումից հետո դուրս են բերվել Կովկասյան ռազմաճակատից, իսկ նրանց տեղը զբաղեցրել են «զինված հայ դասակարգների հրոսակախմբերը»⁵⁴: Անգլիական հետախուզությանը ներկայացրած Ա. Թոյնբիի զեկուցագրում նշվում է. «Հայերի կողմից գրավված տարածքներում մահմեդականների նկատմամբ կիրառված վայրագությունների մանրամասները հաղորդում են փախած թուրք ռազմագերիները: Նշվում է, որ խնդրո վերաբերյալ բողոքները թուրքական կողմը ներկայացրել է Կովկասյան ճակատի բարձրագույն հրամանատարությունը, բայց վայրագությունները շարունակվում են: ... 1. Մեր ներկայացուցիչներն անմիջապես պետք է քայլեր ձեռնարկեն հայերի կողմից մահմեդականների ցանկացած իրական հալածանք դադարեցնելու ուղղությամբ: 2. Մեր պրոպագանդայի կողմից ռուսների թուրքահայաստանը գրավելու պահից սկսած պետք է ակնատեսների վկայությունների հիման վրա պաշտոնական հաղորդագրություն կազմվի և հրապարակվի՝ հայերի և մահմեդականների հարաբերությունների վերաբերյալ: ... Անհրաժեշտ է, որպեսզի պրոպագանդայի այս հատվածն իրականացվի»:

⁵³ Նույն տեղում, էջ 83:

⁵⁴ FO 371/3400/36460.

Թոյնբին ավելացնում էր, որ եթե անգլիական քարոզչութիւնը չգիմի այդ քայլին, ապա. «Այն կօժանդակի թուրք-գերմանական փորձին (որը մինչ այժմ միայն չափազանց հաջողակ է եղել) նախապաշարելու ողջ երկրագնդի մահամեղական կարծիքն ընդդէմ Մեծ Բրիտանիայի»⁵⁵:

Ա. Թոյնբին վերադասին հուշում էր աստիճանաբար հրաժարվել Բրիտանիայի կողմից հայ քրիստոնյաների հովանավորումից, քանզի վերջիններս սկսել էին հալածել «իրենց տիրապետման տակ ընկած անպաշտպան մահամեղական բնակչութիւնը»⁵⁶:

Ա. Թոյնբիի և Ջ. Բրայսի ստորագրութիւնները կրող այս և ուրիշ փաստաթղթերը հնարավորութիւն ընձեռեցին թուրքական նախկին և արդի պատմագրութիւնը ներկայացուցիչների կողմից Բրայսի և Թոյնբիի մասնակցութեամբ հայոց ցեղասպանութիւնը հրապարակայնացման քարոզարշավը համարել պատերազմում Օսմանյան կայսրութիւնը պարտութիւն նպատակով իրականացրած պրոպագանդա՝ փաստա-վավերագրական տեսանկյունից աղավաղված: Անկարայի համալսարանի պատմութիւնը Ֆակուլտետի նախկին դեկան էնվեր Զիա Կարալը այն բնութագրում է որպէս «միակողմանի բրիտանական պրոպագանդա», որը «հանգամանալից խոսակցութիւնը համար որևէ արժեք չունի»⁵⁷: Թուրքիայի պետական արխիւների գլխավոր տնօրեններից մեկը՝ Իսմեթ Բինարկը, նշում է, որ «այսպէս կոչված հայերի կոտորածների վերաբերյալ դեպքերի նկարագրութիւնը-գեղարվեստը... կեղծված տեղեկութիւններ են՝ ձեռք բերված Արևելքին առնչվող անգլիական թղթապանակներից»⁵⁸:

Թուրքական պատմագրութիւնը մեկ այլ ներկայացուցիչ՝ Միմ Քեմալ Օքյեն դրում է, որ Բրայսի և Թոյնբիի հեղինակութեամբ հրապարակված «Կապուլտ գիրքը» հիմնվում է «հայկական աղբյուրների և փաստաթղթերի վրա, որոնք հավաքվել են հայերին օժանդակող երկրորդական և երրորդական աղբյուրներից... Թոյնբին ստեղծեց մագերի բիզ-բիզ կանգնեցնող կոտորածների դրվագներն առանց իր աղբյուրները հիշատակելու, առանց համեմատելու իր աղբյուրները և առանց նշելու ականատեսների անուններն ու ազգանունները: Նա նկարագրեց մտացածին կոտորածներն այնպիսի մանրամասնութիւններով, կարծես ինքն էլ եղել է այդ զոհերից մեկը»⁵⁹: Անգլիական իշխանութիւնների կողմից ցեղասպանութիւնը ականատեսների անունները թաքցնելու պատճառը իրականում այն էր, որ դրանց մեծ մասը չեզոք երկրների քաղաքացիներ էին և իրենց միսիոներական գործունեութիւնը դեռևս շարունակում էին ցեղասպան պետութիւնը տարածքում: Անգլիական պաշտոնյաները փաստաթղթերում չնշեցին ականատեսների անունները նրանց կյանքին սպառնացող վտանգը վանելու համար միայն: Անգլիայի պետական արխիւներում կատարած մեր հետազո-

⁵⁵ Նույն տեղում:

⁵⁶ Նույն տեղում:

⁵⁷ E n v e r Z i a K a r a l. Armenian Question (1878-1923). Ankara, 1975, p. 18.

⁵⁸ I s m e t B i n a r k. "Ermeni Olaylari Tarihi", Huseyi Nazim Pasha's papers, Ankara, 1994, p. XI.

⁵⁹ M i m K e m a l O k e. The Armenian Question 1914-1923. Nicosia, 1988, p. 106-107, նաև՝ K a m u r a n G ü r ü n. The Armenian File: A Myth of Innocence Exposed. Nicosia, 1985, p. 42-43.

տուժյան արդյունքում կարողացանք պարզել, որ «Կապուլտ գրքի» սևագիր և աշխատանքային օրինակները պահվում են Ա. Թոյնբեի վեց ֆոնդերում, որտեղ կարելի է գտնել և՛ ականատեսների անունները, և՛ այն, որ նրանք մեծ մասամբ եղել են Օսմանյան կայսրությունում գործող չեզոք երկրների քաղաքացիներ, մեծ մասամբ ամերիկյան և չվեյցարական, այդ թվում նաև Թուրքիայի դաշնակից Գերմանիայի միսիոներներ⁶⁰: Կասկածի տեղիք չի տալիս նաև այն (Թերևս դրանում «կասկածում են» միայն Թուրքերը և Թուրքամետ ուժերը), որ ցեղասպանությունից գրեթե ինը տասնամյակ անց, «Հայերի նկատմամբ վերաբերմունքը Օսմանյան կայսրությունում (1915–1916 թթ.)», կամ ինչպես պատմագրությունյան մեջ ընդունված է ասել՝ «Կապուլտ գիրքը» Թուրքիայի և պատերազմում իր դաշնակիցների՝ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի վաստաթղթերի առաջին համապարփակ, արժանահավատ, պատմահամեմատական և քննական մեթոդով հաստատվող աշխատությունն է: Դրա աղբյուրագիտական արժեքն անգնահատելի է:

Թուրքական կեղծիքները չեն դիմանում որևէ քննաստուգաբանական և տեսական վերլուծության: Այսպես, Թուրք պատմաբան Կամուրան Գյուլունը գրում է, որ ոմն պրն. Մասթերման, որը նախքան պատերազմը Մեծ Իրիտանիայի Ազգային առողջապահության հանձնաժողովի նախագահն էր, պատերազմի սկզբում թողակի անցնելուց հետո իշխանությունների օժանդակությամբ հիմնում է «Wellington House» տպագրատունը՝ պրոպագանդիստական մեթոդներով վարկաբեկելու համար Թուրքիայի և Գերմանիայի հեղինակությունը: Համաձայն Թուրք կեղծ պատմագրության այս ակնառու ներկայացուցչի, «Masterman Bureau»-ն արդեն 1916 թ. առաջին կիսամյակի ավարտին հրատարակել էր Թուրքիան զրպարտող 40 անուն գրքեր և գրքուկներ, այդ թվում Զ. Բրայսի և Ա. Թոյնբեի հեղինակությունով: Գյուլունը պնդում է, որ Ա. Թոյնբեի «Հայերի նկատմամբ վայրագությունները: Ազգի սպանությունը»⁶¹ աշխատությունը ծնունդ է առել այս հաստատությունում և նույնանուն հրատարակչությունում: Եթե Թուրք հեղինակը չտառապեր իր ազգին հատուկ ծուլությունը և զններ, նախքան ստելը, 1916 թ. հրատարակված, Հայոց ցեղասպանությունն ամենայն մանրամասնությամբ լուսաբանող այդ մենագրության տիտղոսաթերթը, ապա կտեսներ, որ այն հրատարակվել է «Hodder&Stoughton» տպագրատանը, ոչ միայն Լոնդոնում, այլև համատեղ Լոնդոն, Նյու Յորք, Տորոնտո քաղաքներում⁶²: Տարանուն «Masterman Bureau»-ի հետ որևէ առնչություն չունեցող տպարաններում են ծնունդ առել ինչպես Զ. Բրայսի ու Ա. Թոյնբեի⁶³, այնպես էլ այլ հեղինակների՝ Թուրքիայի ոճիրը, հա-

⁶⁰ FO 96/205-211.

⁶¹ K a m u r a n G ü r ü n. Նշվ. աշխ., էջ 40:

⁶² A. J. T o y n b e e. Armenian Atrocities. The Murder of a Nation. London-New York-Toronto. 1916.

⁶³ A. J. T o y n b e e and J. B r y c e. The Murderous Tyranny of the Turks. London-New York-Toronto. 1917; V. B r y c e. The Settlement of the Near East. Reprinted by Permission from "The Contemporary Review". London, 1920; Germany, Turkey and Armenia. A Selection of Documentary Evidence Relating to the Armenian Atrocities from German and Other Sources. London, 1917; V. B r y c e. The Future of Armenia. Reprinted from "The Contempo-

յոց սպանողն ու վիշտը. հայոց ցեղասպանությունն ու հայ ժողովրդի սլատմությունն ամփոփող գրքերն ու պրոբլեմները⁶⁴:

Իսկապես, հայոց ցեղասպանության մեկնության և լուսաբանման վայրիվերումներում երկարակյաց Ա. Թոյնբին ֆենոմեն էր: Նա հայտարարեց, որ հայոց ցեղասպանության հրապարակայնացման վերաբերյալ ինքն ու Ջ. Բրայսը անգլիական պաշտոնական իշխանությունների մտադրության մասին ոչինչ չգիտեին: Հիշատակելի է, որ 1920-ական թվականներին, երբ Մեծ Բրիտանիան դնաց Մ. Քեմալի հետ մերձեցման, Ա. Թոյնբին ամբողջապես փոխեց իր վերաբերմունքը հայոց ցեղասպանության նկատմամբ: 1922 թ. վախճանվեց Ջ. Բրայսը, որը, թերևս, եթե քիչ երկար ապրեր, կկարողանար հիմնավորել այն փաստարկները, որոնք դրդեցին նրանց հրապարակայնացնելու հայոց վիշտը⁶⁵: Իր դործունեության վազ շրջանում Ա. Թոյնբին «Միություն և առաջագիմություն» կոմիտեին, թուրքական կառավարությանը, էնվերին և Թալեաթին անվանում էր «անպատկառ սրիկաների հրոսակախումբ», իսկ Թալեաթին՝ ոճրագործ, որը հայտարարել էր, թե հայոց ցեղասպանության արդյունքում այլևս «Հայկական հարց չի լինի շուրջ 50 տարի»⁶⁶: Ա. Թոյնբին իր աշխատության մեջ այնքան մանրամասն է Հայոց եղեռնի նկարագրման մեջ, որ 1916 թ. հրատարակած աշխատությունում նշում է, որ բնաջնջման ընթացքում հայ աղջնակները թուրքերի կողմից վաճառվում էին կես մեջիդեով, մանրամասնում հայ կանանց նկատմամբ սիրիական անապատների ճանապարհին կատարված բռնություններն ու բռնաբարությունները, թե ինչպես էին հայ մայրերը իրենց կաթնակեր երեխաներին նետում անգունդը⁶⁷:

Երիտասարդ շրջանում գրած իր աշխատության մեջ Ա. Թոյնբին նկարագրում է, թե ինչպես էին դեպի մահվան ճամբարներ տանող քարավանները ձգվելով հարյուրավոր կիլոմետրեր, մաշվում և ոչնչանալով ճանապարհին, հասնում Միջագետքում գտնվող Դեր-էլ-Ջոր անապատը՝ գտնելով այնտեղ իրենց տանջալից վախճանը⁶⁸: Իր աշխատության մեջ Ա. Թոյնբին նաև կանխատեսում է հայոց ցեղասպանության ժխտման և ուրացման թուրքական պատմագրության հետագա մեթոդները, հիմքերն ու ուղիները: Ըստ նրա, թուրքերն ասելու էին. «Մենք պատերազմի մեջ էինք» և «կոմունիստները մեր գոյության համար: Հայերը հույս ունեին, որ մեր թշնամիները կհաղթեին. նրանք զավազրություններ էին կազմակերպում այդ հաղթանակի ձեռքբերման համար»: Դատապարտելով այս պնդումների և ապագա կեղծիքների անհիմնավորությունը՝ Թոյնբին պարզաբանում է, որ հայերը «Բոլորն էլ գտնվում էին Անատոլիայի ներսում, հավասարապես Կովկասյան ճակատից և Դարգանելից հեռու»⁶⁹: «Հայ ժո-

rary Review", London, 1918; M. S y k e s. The Future of the Near East. London, 1920; L. C. L e e s e. Armenia and the Allies. London, 1920; Armenia's Charter. London, 1918.

⁶⁴ E. J. R o b i n s o n. Armenia and the Armenians. London, 1918.

⁶⁵ J a c k N. P o r t e r. "Genocide and Human Rights. A Global Anthropology". Marjorie Housepian, The Unremembered Genocide. Lenham-New York-London, 1982, p. 110.

⁶⁶ A. J. T o y n b e e. Armenian Atrocities, p. 27-28.

⁶⁷ Նույն տեղում, էջ 39-43.

⁶⁸ Նույն տեղում, էջ 56-65:

⁶⁹ Նույն տեղում, էջ 69:

դովորելի նկատմամբ ոճիրը կանխատեսված էր, խորապես կշռադատված և իրականացման մեջ գերագույնս կազմակերպված»⁷⁰: Եթե կենդանի լինեիր «Արդուլ Համիդը՝ այս ամենը լսելիս կրկին կծիծաղեիր»⁷¹: Հայաջնջման այս մեղքերը գլխավորապես բարդելով Գերմանիայի վրա, իր աշխատությունների վերջում Ա. Թոյնբրին ինքն իրեն հարց է տալիս, թե ո՞վ է շահելու հայերի բնաջնջումից, և ինքն էլ պատասխանում իր հարցին. «Ո՛չ հայերը և ո՛չ էլ թուրքերը», այլ՝ գերմանացիները⁷²: Մեր խորին համոզմամբ, պատմութ-յունն ապացուցեց, որ հայաջնջումից օգտվողները մասամբ Ա. Թոյնբրին ու իր հայրենակիցներն էին:

Մեկ այլ աշխատություն մեջ, որը սկսվում է Ջ. Բրայսի առաջաբանով, Ա. Թոյնբրին գրում է. «Հայերն առաջին ժողովուրդն էին, որ քրիստոնեություն ընդունեցին: ... Երբ նրանք անկախ թագավորություն ունեին, նրանք ստեղծեցին հիասքանչ գրականություն և ճարտարապետություն, որը կործանեց թուրքական նվաճումը: Այդ պահից ի վեր, թուրքերը հայերի հետ մրցակցություն ընթացքում դրսևորած բոլոր սիմպտոմները ճնշել են կոտորածներով. դրանց մեջ ամենասարսափելին ոճրագործվեց անցյալ տարի»⁷³: Հայկական հարցում իր երկրի խաղաղած բացասական դերի և մեղքի առջև մեղանշելուն է կարծես միտված Թոյնբրի արտահայտած այն կարծիքը, որ երբեք հայերի նկատմամբ ոչնչացման քաղաքականությունը չէր կենսագործվի, եթե «չձախողվեիր Դարդանելի օպերացիան»⁷⁴:

Երիտասարդ տարիների իր աշխատությունների վերանայումը Ա. Թոյնբրին սկսեց այն բանից հետո, երբ որպես «The Manchester Guardian»-ի թղթակից մասնակցեց թուրք-հունական պատերազմին: Այսուհետև թուրքերը նրա աշխատություններում սկսում են հանդես գալ որպես «տառապալ մարդկային էակներ»⁷⁵: Ուշ շրջանում շարադրված իր 12 հատորանոց «Պատմության ուսումնասիրություն» աշխատության մեջ արդեն, Թոյնբրին կարծես արդարացնում է հայերի ցեղասպանությունը, համեմատելով այն ուսանների կողմից Կենտրոնական Ասիայի թուրք քոչվորների նկատմամբ իրագործած ոճրագործությունների հետ: Երկու ոճիրները դատապարտելու փոխարեն, նա դրանց միջև համեմատություններ է անցկացնում⁷⁶:

Միջին տարիքում Ա. Թոյնբրին, սովորելով թուրքերեն, ձեռք է բերում բազմաթիվ ընկերներ և մի քանի անգամ ճամփորդում Թուրքիայում, նույնիսկ լինում Արևմտյան Հայաստանում: Ինքն իրեն հակասող գիտնականն, այնուամենայնիվ, իր «Մարդկային ցեղը և մայր երկիրը» գրքում գրում է. «XX դ. երկու մեծ պատերազմների վրա ծանրացավ ցեղասպանությունը: Առաջին աշխարհամարտում թուրքերը ցեղասպանության ենթարկեցին հայերին: Երկրորդ աշխարհամարտում գերմանացիները նույնը

⁷⁰ Նույն տեղում, էջ 80:

⁷¹ Նույն տեղում, էջ 105:

⁷² Նույն տեղում, էջ 116:

⁷³ A. J. Toynbee and J. Bryce. The Murderous Tyranny of the Turks, p. 9.

⁷⁴ Նույն տեղում, էջ 29:

⁷⁵ Jack N. Porter. Նշվ. աշխ., էջ 110:

⁷⁶ Ara Baliogian. The Armenian Genocide and the West. Jerusalem, 1984, p. 8-9.

կրկնեցին հրեաների դեմ»⁷⁷: 1968 թ. լինելով Վանում Ա. Թոյնբին նշում է, որ Թուրքերն «ամաչում են» ցեղասպանությունից: Մեկ այլ տեղ նա գրում է. «Ես ինձ շարունակ հարց էի տալիս, թե ինչպես կարող է բանական էական անել այն, ինչ արեցին ցեղասպանության հանցագործները»⁷⁸: Միաժամանակ հիանալով Թուրքերով նա նրանց համարում է լավ մարդիկ, որոնք վատ են զգում միայն իրենց պատմության մեջ տեղ գտած բացասական մի միջադեպից, երբ 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո միջազգայնացվեց Հայկական հարցը, որն էլ նրանցից պահանջեց արմատական լուծում: Արևմտյան հեղինակներից ճշմարտացի է Մորիս Սամուելը, Թոյնբին համարելով այն պատմաբաններից, որոնք «ընդունակ են անտեսել չափազանց կարևոր փաստեր, որոնք իրենք են ջրի երես հանել»⁷⁹: Ուշ շրջանում գրված իր մեկ այլ աշխատության մեջ Թոյնբին կարծես ակնարկում է, որ հայերը ճակատագրական սխալ թույլ տվեցին, որոշելով անջատվել Թուրքիայից, ավելի մեծ սխալ, երբ մերժեցին ընդունել իսլամը և եղբայրության թուրքական ավանդույթը: Համաձայն նրա, հայոց ցեղասպանությունը պատմական պիեսի վերջին գործողությունն էր, որի բովանդակությունը շարադրվել է Աստծո ձեռքով⁸⁰:

Պատմաբան Լիլիան Էթմեքջյանին հղած իր պատասխան նամակում Ա. Թոյնբին 1966 թ. մարտի 16-ին գրում է. «Ճշմարիտ է, որ Ջ. Բրայսի «Կապույտ գիրքը» կազմելու բրիտանական կառավարության խնդրանքի շարժառիթը պրոպագանդան էր: Բայց լորդ Բրայսի կողմից այն նախաձեռնելու և գրքի վրա աշխատելու իմ շարժառիթը ճշմարտությունը ճանաչելի դարձնելն էր, իսկ ապացույցները լավն էին: Բոլոր վկայությունները ստացվել էին ամերիկյան միսիոներներից, առանց քաղաքական որևէ ազդեցության: Ուստի, «Կապույտ գիրքը» Լեփսիուսի գրքի հետ ներկայացնում է ճշմարիտ պատմությունը»⁸¹: Ինքն իրեն հակասող այս գիտնականը 1922 թ. հրատարակված աշխատություններից մեկում գրում է. «Ամենաազդեակող ժամանակակից օրինակը հայերին 1915 թ. բնաջնջելու փորձն էր»⁸²: 1967 և 1969 թվականներին գրված երկու այլ աշխատություններից՝ «Արևմտյան հարցը Հունաստանում և Թուրքիայում» և «Գիտելիքներ», վերջինում արդեն աշխարհահռչակ գիտնականն ասում է. «Մեր XX դ. ցեղասպանության տարբերակիչ նշանները կայանում են նրանում, որ այն իրականացվել է սառնասրտորեն, բռնակալական քաղաքական իշխանություն ունեցողների կանխամտածված հրահանգով: Ես չափազանց ծեր եմ հիշելու (ընդգծումը՝ Տ. Ս.) Օսմանյան կայսրության օսմանահպատակ Հայերի 1896թ. կոտորածների սարսափները՝ դրդված ստոր սուլթան Աբդուլ Համիդ II-ի կողմից: Բայց ցեղասպանության այս դործողությունը դիվետանտային և անարգյունք էր, ի տարբերություն Առաջին աշխարհամար-

⁷⁷ Նույն տեղում, էջ 11:

⁷⁸ Նույն տեղում, էջ 14:

⁷⁹ Նույն տեղում, էջ 17:

⁸⁰ Նույն տեղում, էջ 20:

⁸¹ L. E t m e k j i a n. Toynbee, Turks, and Armenians.— “Armenian Review”. vol. 37. № 3-147, Autumn 1984, p 61.

⁸² A r n o l d J. T o y n b e e. The Western Question in Greece and Turkey. London, 1922, p. 265.

տում՝ 1915 թ. օսմանյան հայերին բնաջնջելու մեծապես հաջող այն փորձի, որն իրականացվեց Հետհամիդյան «Միություն և առաջադիմություն» կոմիտեի վարչակարգի կողմից, որի գլխավոր ոճրագործները Թալեաթն ու էնվերն էին»⁸³:

Եթե «Կապուլյոս դիրքը» կազմող Ա. Թոյնբին, Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ թուրքերին համարում էր «մարդակեր հակա-ներ»⁸⁴, ինչպես արտահայտվում էին նաև նրա ընտանիքի անդամները, ապա թուրքերեն սովորելուց և թուրքիայի ՆԱՏՕ-ին անդամակցելուց հետո, հարկադրված էր հանդիսվել և ընկերութուն անել «այն հանցագործների խեղճ հայրենակիցների հետ, որոնք իրականացրել էին հայոց ցեղասպանութունը»⁸⁵: Թուրքերին «մարդկային էակներ» և կրթված ընկերակիցներ համարող⁸⁶ Ա. Թոյնբին իր կյանքի ավարտին, խոր ծերության մեջ վերջնականապես բացահայտելով իր էութունը և ընդհանրացնելով հայոց ցեղասպանության վերաբերյալ իր նախկին ու ներկա հայացքները, 1973 թ. դեկտեմբերի 6-ին արդեն մեծավաստակ ցեղասպանադետ Վ. Տատրյանին հղած իր պատասխան նամակում գրում է. «Ուրախ եմ, որ ստացա 1973 թ. նոյեմբերի 1-ի նամակը, իր հավելվածներով: Իմ զգացմունքներն ու դատողութունները նույնպիսին են, ինչպես եղել են միշտ: 1916 թ. հայերի ցեղասպանութունը քրեական ոճիր էր: Թուրքերն այսօր ամաչում են դրանից, այնուամենայնիվ մարդկայնորեն կամ սխալմամբ, նրանք դեռևս չեն կարող ստիպել իրենց ընդունելու այն: Ես նկատեցի այդ 1968 թ. Վանի շրջանում ճանապարհորդելիս:

Եթե փաստերը վերահրատարակելը կարողանային մահացածներին կենդանության վերադարձնել, ապա ես կլինեի առաջին մարդը, որ կանեի այդ: Իրականում ես ինքս չեմ ուղում դա անել, հանուն՝ (1) Թուրքիայի կաթոլիկ հայ համայնքի և (2) խուսափելու համար Երևանի հանրապետության և Թուրքիայի միջև ատելության հետագա սաստկացումից: Ես համոզված եմ, որ Դուք կհասկանաք այս դատողութունները»⁸⁷: Թվում է, որ կյանքի մայրամուտին Ա. Թոյնբին իր «Հայասիրությամբ» հոդ էր տանում բնաջնջված ժողովրդի ապագայի վերաբերյալ, բայց դժվարությամբ կարելի է այս ամենը որպես ճշմարտութուն ընդունել: Փաստերի վերահրատարակութունն ու հայոց ցեղասպանության լուսաբանման և հրապարակայնացման նրա դերն արժեքավորող արխիվային պրպտումների առջև երկնչում էր այն մարդը, որը 1915 թ. երիտասարդ ու խոստումնալից գիտնականը ընդհանրացրել ու առաջինն էր աշխարհի դատողությանը հանձնել Մեծ եղեռնի պատմութունը: Մտավախութունը, թերևս, իր իսկ հակասական էության պարզաբանման և բացահայտման մեջ էր, որ կարող էին լույս աշխարհ դալ անգլիական արխիվային հաստատութուններից և «տիրոջը» անգլիական շահի ծառայության իր նվիրումի գիտական մեկ-

⁸³ A. J. T o y n b e e. Experiences. New York-London, 1969, p. 241-242.

⁸⁴ L. E t m e k j i a n. Նշվ. աշխ., էջ 63:

⁸⁵ A. J. T o y n b e e. Acquaintances. New York - London, 1967, p. 240.

⁸⁶ A. J. T o y n b e e. Companing Notes: A Dialogue Across a Generation. London, 1963, p. 59-60.

⁸⁷ Առնոլդ Թոյնբիի նամակը Վահագն Տատրյանին (6 դեկտեմբերի, 1973թ.) նամակի տեքստը մասնակի մեջբերված է նաև՝ A. B a l i o g i a n. Նշվ. աշխ., էջ 11:

ըին՝ նա 1915 թ. մեկնեց Լոնդոն՝ կառավարության և, «մասնավորապես լորդ Բրայսի հետ բանակցություններ վարելու»⁹⁰: Այս առթիվ մեր կողմից հայտնաբերված արխիվային փաստաթուղթը, որը գրվել է 1915 թ. հունիսի 15-ին Ջ. Բրայսի կողմից և ուղարկվել խորհրդարանի մեկ այլ անդամ՝ Ա. Վիլլիամսին, բացահայտում է, թե ինչպիսի նշանակություն ուներ նրանց համար հայոց ողբերգությունը և ինչպես էին նրանք վերաբերվում Ա. Չոպանյանի լոնդոնյան «առաքելությանը». «Կարծում եմ, որ պատշաճ ժամանակ է հայտնաբերելու համար... ավելի հետաքրքրություն կլինի Հայաստանի ապագայի մասին խոսել, երբ պատերազմը մոտենա իր ավարտին... անգամ թերթերի հաղորդումները շատ քիչ ուշադրություն կդարձնեն այս տեղեկության վրա այժմ և շուտով մոռացության կմատնեն»⁹¹:

Այս է դառն իրողությունը, բայց ճշմարտություն է նաև այն, որ Ջ. Բրայսի և վաղ շրջանում Ա. Թոյնբիի գրած աշխատություններն անփոխարինելի և անգնահատելի աղբյուրագիտական արժեք ունեն ինչպես հայոց ցեղասպանության, այնպես էլ Հայկական հարցի հետազոտողների համար: Այլ հարց է, որ եթե համաշխարհային դիտության բարձունքները մագլցել ձգտող երիտասարդ Թոյնբին, իր անդրանիկ աշխատություններում առաջնորդվում էր գիտական անաչառության և փաստերի վավերականության մասին, ապա արդեն ուշ շրջանում, նա սկսեց տուրք տալ 20-ական թվականների անգլո-թուրքական «բարեկամության և եղբայրության» ավանդույթին և գրանից բխող իր երկրի շահը պահանջող քաղաքական արկածախնդրությանը: Սրանում է ինչպես Ջ. Բրայսի, այնպես էլ Ա. Թոյնբիի էկլեկտիզմի ֆենոմենալ էությունը:

ОСВЕЩЕНИЕ ВОПРОСА О ГЕНОЦИДЕ АРМЯН В АНГЛИИ. ДЖЕЙМС БРАЙС И АРНОЛЬД ТОЙНБИ

ТИГРАН САРУХАՆՅԱՆ

Р е з ю м е

Освещение геноцида армян во время Первой мировой войны в Англии было продиктовано официальными интересами этой страны. Выступая как "освободительница малых народов", Англия оправдывалась перед собственной и мировой общественностью за свое участие в Первой мировой войне. Свой вклад в освещение геноцида армян внесли член английской Палаты лордов, лорд Джеймс Брайс и юный, делавший первые шаги в науке, в будущем всемирно-известный ученый Арнольд Тойнби. Несмотря на их многочисленные статьи и монографии о геноциде армян, прочитанные лекции и выступления, которые констатировали историческую правду о судьбе армян, эти два деятеля служили

⁹⁰ Կ. Դ ա Վ լ ա ք յ ա ն. նշվ. աշխ., էջ 328:

⁹¹ Գ Ա Թ, Ա. Չոպանյանի ֆ., բ. 1, ց. 6, N 4797:

интересам собственной страны во имя победы Великобритании в войне. В этом заключается феноменальный научный и общественный эклектизм Дж. Брайса и А. Тойнби в период Первой мировой войны.

PROPAGANDING THE ARMENIAN GENOCIDE IN ENGLAND.
JAMES BRYCE AND ARNOLD TOYNBEE

TIGRAN SARUKHANYAN

S u m m a r y

The enlightenment of the Armenian Genocide in England, during World War I, was due to the national interests of Great Britain. Presenting herself as “the liberator of the small nations”; Great Britain tries to explain the international and own public, the reason of her participation in World War I. Their contribution in making the Armenian Genocide public made the Member of the House of Lords, James Bryce and, a young and, very prominent scholar in future, Arnold Toynbee. In spite of various articles and books, written by them, their lectures and speeches on the Armenian Genocide, which ascertained the historical truth on the fate of Armenians, these two activists served to the self-interests of their country— to the victory of Great Britain in the War. Herein, is the eclectically scientific and social phenomenon of both J. Bryce and A. Toynbee.